չաբարի գործարանն և մշակութեան զանազան նորելուկ գործիքնե-ը։ Քիչ մ'անգին հանքերու աշխատութեանը ծառայող մեքենայք, յորս և նորահնար կառատորմ մը, որ ելեկտրականութեամբ լուսաւորուած հանքերն տեղափոխելու կը ծառայէ։ Զմուռնայք յիշելու ևս մնմի, կարի, արևելեան նմանութեամբ կապերտ և գորգ շինելու զանազան գործիքներն, և գաղափար մի կ'ունենանք յայնժամ աշխարհի մը հարստութեան, որոյ սկզբնապատճառն է գործեաց ճշդութիւնն և ժամանակին վաստակը։

Շարունակելի — *Հ. Գէորգ Պաշեան*

ԹԱՆԳԱՐԱՆ ՇՕՇԱՍՏԱՆԻ

Շօշաստանի թանգարանին սրահը 'ի մօտոյ աւելի ևս պիտի ճոխանայ՝ Դարեհի պալատան մէջ գտնուած առարկաներով. այս իրաց ամենամեծ կարևորութիւնը իմանալու համար, կը դնենք ասա հետևեալ նկարագրութիւնը՝ զոր կ'առնումք Տիէօլաֆուայի սոյն առթիւ բրած բանախօսութենէն։

«Արքունի ապարանքն 17–18 մէդր բարձրութեամբ գրեթէ ուղղանկիւն սարահարթ հողաբլրոյ մը վրայ կ'ամբառնայր, արևելեան և արևմտեան կողմերէն շրջապատեալ բարձր պարսպաբ։ Հիւսիսակողմեան պարսպաց գագաթը հաւասար էր պալատան միահարթ տանեաց, ուստի և թագաւորն իւր բնակարանին սեմէն կ'ընդգրկէր միով հայեցուածով բովանդակ Բակտրեան լերանց շղթայն, գաշտագետինը և Շօշ քաղաքը։ Ապադանայի սարահարթին հարաւակողմն՝ նշմարան կոչուած դերեզմանաբլրոյն և ամրոցին մէջ գտնուած զինուորական հրապարակին մի մասը կը կազմէր։ Զինուորական հրապարակին գլխաւոր մուտքը գահուն սրահին մէջ էր, արևելեան կողմը և ամրոցին պարսպաց ստորոտը։

«Անանց ուշադիր լինելու Դարեհէն առաջ կառուցեալ կողմնակի շէնքերուն, մտոյ այն գռնէն և դէպ յԱրտաշիսի պալատը ուղղեցի իմ քայլերս։ Հոս այցելուին աչաց առջև հսկայաձև սանդուխ մը կը ներկայանայ։ Այս սանդուխս կը գտնուէր սքեմենեան սարահարթին հարաւային կողմն կեդրոնը, որոյ կողմնակի մասերն պարսպաց վրայ կը հանդչէին՝ հաստատեալ կրկին աշտարակաց վրայ։ Թախթէ–ճէմշիտի սանդղոց նման՝ կը բաղկանայր և այս չորս աստիճաններէ կրկին բաժանմամբք. սանդղոյն ատաձիաձև ձեւնընթացիկն՝ Լուվրի առաջին սրահին մէջ 'ի ցոյց դրուած հրաշալի յախճապակեայ ագուցեալ են։ Այնքան դիւրելանելի էին սանդղամատուռնքն (որոց գառ 'ի վերն է 23 սանթիմէդր՝ իւրաքանչիւր մէդրին վրայ) որ կարելի է ձիով իսկ վեր ելնել. և ապա կը հասնէին 'ի գաւիթն որ արևելեան և արևմտեան կողմերէն պարսպապատ էր։ Սրահքն՝ մնացածին կենդանեօք զարդարեալք՝ թևոց կեդրոնավայրը կը գրաւէին. սանդղոյն դէմ ընդ դէմ լայն խորշ մը կը բացուէր, որ Պերսեպօլսոյ Վիստասպու կամարակապ սրահին դրանց նման

digitised by A.R.A.R.@

կրկին մեծամեծ գոնիերու մէջտեղը կը գտնուէր։ Շօշական դրունքն վարդագոյն և սպիտակ միւսեռնօք զարդարեալ էին, որոց վրայ կը տեսնուէր արիւծուց զարմանալի խումբ մը։ Երկրորդ գաւթին սեմը հասնելէն յառաջ կը տեսնուէր գտնուն սրահն։

«Պատանու իւրքրջակայ գտնուած տաէն չէնիերէն բաժնուած է. հարաւէն՝ ներբին գաւթով. իսկ հիւսիսէն, արևելքէն և արևմուտքէն՝ 22 մէտր լայն փոսով մը, որոյ յատակը գտնուած թեթև զառ 'ի վեր թումբի մը վրայ կը շրջագայէին արքունի կառքերն, որք դաշտավայրէն մինչև պալատը կ'ելնէին։ Արևելեան կողմը՝ նայելով դէպ 'ի գահուն սրահը՝ ուրիշ նոր կամարակապ սրահ մը կար. այս սրահէս անցնելէն յետոյ՝ կը պատահինք ուրիշ երկրորդական սանդղոյ մը մտոց, և պարապայ վրայ շինուած ճանապարհի մը, որ թագաւորին գործածութեան համար էր։ Իւր եւրանական հողարլոյն վրայ գտնուած կանանոցէն կ'երթար իւր պաշտօնական տեղերը։ Յատակագծին համարիր մասանց պատշաճութեան նայելով՝ հարկ էր որ ձախակողմը ուրիշ երրորդ սանդուղ մ'ևս գտնուէր. 'ի զուր փնտռեցի զայն, վասն զի բոլորովին կործանած և անչհետացած էր։ Սակայն Պապանայի արևմտեան կողմը՝ դեռ ևս կը նշմարուին արևելեան դրան համեմատական մի ուրիշ դրան նշաններ։

«Պատատն երեք սիւներն և նոցա երկգլխեան կարգերն անուշտ այցելուաց աչքէն պիտի խուսափեն, եթէ անոնց ծայրերը գտնուած լայն խորշերուն միջէն չտեսնան զանոնք։ Արքունական բնակարանաց մէջ մտնելէն առաջ կարելի է հանգիստ կերպով դիտել և սքրտնալ այն կամարակապ սրահից գեղեցկութեան և վսեմութեան վրայ։ Գահուն սրահն իւր բարձրութենէն կը տիրապետէ հիւսիսային ամրոցաց վրայ, և իւր մեծագործ պատուանդանին վրայ բարձրացած՝ եւրանական ժողովրդոց բարեպաշտ պատկառանքը և զարմացումը իրեն կը ձգէր։ Դարեհի ժամանակաց նման, այս կամարակապ սրահից որմունքն զարդարեալ պիտի բլլային մարտիկ զօրականք և բազմաթիւ արձանագրութեամբք, որք ապագայ սերնդոց պիտի պատմէին արքունի շքեղութիւնքն և փառքը։ Սակայն այս բանս չեմ կարող յստուգիւ հաստատել, վասնզի նոր պալատան պեղմանց մէջ չիրցայ ապացոյց մը գտնել. բայց կարծեմ Արտաշիսի ճարտարապետը չյանդգնեցան խոտորել իրենց նախորդաց գործոց սրբազան ատանդութիւններէն։

«Անանց առանձին բաժանմունքն, անոնց եզական դիրքն և փառաւոր զարդարանքն՝ ըստ բաւականի կը ցուցնէին, թէ պալատան այս մասը բոլորովին թագաւորին գործածութեան սեպհականեալ էր։ Արքունի իշխանութեան պատշաճող քան ամէն առանձնաշնորհութիւն՝ գերազանց էր այս և նախանձելի. վասն զի բարձրագահ աթոռէն կրնար թագաւորն դիտել բովանդակ Շօշաստանը՝ իւր ոտից ներքև խոնարհեալ։»

Ադյպէս ահաշնորհիւ արդիւնաւոր խուզարկութեանց Պ. և Տ. Տիէօլաֆուայի, վերտին կը դիտենք այժմ Ադեմենեանց անմման պալատները, որք Դարեհի և Արտաշիսի բանակաց գինուց շառաւմամբք հընչեցին, որք ակնախտիղ զարդուց և ճոխութեանց գանձարան մ"եղան, և յետ սոյնպիսի փառաւորութեանց՝ Սաղամինայի տխուր արձագանգը լսեցին։

digitised by A.R.A.R.@